

« Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/4

28 օգոստոսի 2012թ.

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովի 27.07.2012թ-ի նիստում քննության է առնվել Ա/Ձ Սասուն Գրիգորյանի 18.07.2012թ. թիվ 02 գանգատը « ԿԱ ՊԵԿ Հրազդանի ՏՀՏ 02.07.2012թ. թիվ 1101923 ստուգման ակտի դեմ: Արդյունքում ընդունվել է որոշման նախագիծ, որի համաձայն վերոգրյալ ստուգման ակտը թողնվել է անփոփոխ:

Համաձայն « ԿԱ ՊԵԿ նախագահի 14.05.2012թ. թիվ 1101923 հանձնարարագրի, Ա/Ձ Սասուն Գրիգորյանի մոտ կատարվել է « օրենսդրությամբ հարկային մարմնին վերապահված իրավասության սահմաններում հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, որն ընդգրկել է 16.12.2011թ-ից մինչև ստուգման ավարտն ընկած ժամանակաշրջանը: Ստուգման արդյունքում 02.07.2012թ-ին կազմվել է թիվ 1101923 ստուգման ակտը (այսուհետ նաև ստուգման ակտ), որով լրացուցիչ գանձման է առաջադրվել 300.000 դրամ:

Ստուգման ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ հարկային տեսուչ Բագրատ Մուրադյանի կողմից 13.06.2012թ. ժամը 17:50-ին ք.Հրազդան, Կենտրոն 29/3 հասցեում գործող խանութից կատարվեց հսկիչ գնում 1600 դրամ ընդհանուր արժողությամբ՝ 1 շիշ «Վերնաշեն» տեսակի գինի 1550 դրամ արժողությամբ և մեկ հատ պլիէթիլենային տոպրակ 50 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվեց կանխիկ դրամով: Ա/Ձ-ն գումարը չմուտքագրեց «ԴՄ և համապատասխան գումարի «ԴՄ կտրոն չտրամադրեց: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17:58-ին «ԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 2660 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը՝ 1600 դրամը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո ստուգող հարկային ծառայողների հետագա գործողությունները խոչընդոտվեց Ա/Ձ-ի կողմից, կատարված վճարման արժեքը՝ 1600 դրամը, չմուտքագրվեց «ԴՄ:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսվարող սուբյեկտի կողմից խախտվել են « Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված «ԴՄ շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները: Արդյունքում տնտեսվարող սուբյեկտին «հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» « օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կարգով առաջադրվում է տուգանք 300.000 դրամի չափով:

Ստուգման ակտի վերաբերյալ Ա/Ձ Սասուն Գրիգորյանի կողմից ներկայացված գանգատում մասնավորապես նշված է հետևյալը:

Խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի հավելված 2-ի 1.4. կետի դրույթները՝ առկա չէ հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագիր, իսկ միգուցե այդ հանձնարարագիրը նույն « ԿԱ ՊԵԿ նախագահի թիվ 1101923 հանձնարարագիրն է, թե՛ նոր պիտի տրվի:

Ստուգման ակտում նշվում է, որ հսկիչ գնումը կատարվել է հարկային տեսուչ Բագրատ Մուրադյանի կողմից, իսկ հունիսի 13-ին, այսպես ասած ստուգման օրը, երիտասարդները նշում էին, որ իրենց բաժնի պետն է առևտուր արել և որին չի տրամադրվել «ԴՄ-ի կտրոն:

Խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի հավելված 2-ի կետ 1.5-ի պահանջները՝ հսկիչ գնում իրականացնելու վերաբերյալ հանձնարարագիր չլինելու հետևանքով այն չի ներկայացվել:

Խախտվել են նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» « օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ կետի, 3-րդ հոդվածի 2-րդ կետի, 8-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Սասուն Գրիգորյանը խնդրում է չեղյալ համարել ստուգման ակտը:

« ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), լսելով Ա/Ձ Սասուն Գրիգորյանի, վերջինիս ներկայացուցիչի և ստուգումն իրականացրած պաշտոնատար անձի ներկայացված փաստաթղթերը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերը և ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Նախ նշվեց, որ 27.07.2012թ-ին Հանձնաժողովը քննության է առել Ա/Ձ Սասուն Գրիգորյանը գանգատը 13.06.2012թ-ին կազմված հարկ վճարողի խոչընդոտող գործողությունների մասին թիվ 1 արձանագրության և ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 19.07.2012թ. վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 196305 որոշման դեմ: Արդյունքում ընդունվել է թիվ 31/5 որոշումը, որի համաձայն վերոգրյալ արձանագրությունը և որոշումը թողնվել են անփոփոխ:

Ինչ վերաբերվում է ստուգման ակտով արձանագրված խախտմանը, ապա հարկային տեսուչ Բագրատ Մուրադյանը պնդեց, որ իր կողմից 13.06.2012թ. ժամը 17:50-ին ք.Հրազդան, Կենտրոն 29/3 հասցեում գործող խանութից գնվել է 1 շիշ <Վերնաշեն> տեսակի գինի 1550 դրամ արժողությամբ և մեկ հատ պոլիէթիլենային տոպրակ 50 դրամ արժողությամբ, որի դիմաց վճարումը կատարվել է կանխիկ դրամով: Ա/Ձ Սասուն Գրիգորյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ստուգում անցկացնող հարկային ծառայողների կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 17:58-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել <Z> հաշվետվություն՝ 2660 դրամ ընդհանուր գումարով, որում կատարված վճարման արժեքը՝ 1600 դրամը, ներառված չի եղել: Սակայն, <Z> հաշվետվությունը դուրս բերելուց հետո ստուգող հարկային ծառայողների հետագա գործողությունները խոչընդոտվել են, որի հետևանքով կատարված վճարման արժեքը՝ 1600 դրամը, չի մուտքագրվել ՀԴՄ:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Սասուն Գրիգորյանի կողմից խախտվել են ՀՀ Կառավարության 26.08.2004թ. թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որի համաձայն հսկիչ-դրամարկղային մեքենայի միջոցով հաշվարկներն իրականացնող պատասխանատու անձը պարտավոր է ՀԴՄ-ի միջոցով տպել և գումարն ստանալու պահին ապրանքի հետ միասին գնորդին տրամադրել դրամակղային չեկ (կտրոն):

Ինչ վերաբերվում է գանգատում բերված այն պնդմանը, որ ստուգում չի կատարվել, հսկիչ գնում կատարելու վերաբերյալ հանձնարարագիր չի ներկայացվել, ինչպես նաև չի ներկայացվել ստուգման հանձնարարագիրը, ապա այդ կապակցությամբ նշվեց հետևյալը:

Համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.05.2012թ. թիվ 1101923 հանձնարարագրի Ա/Ձ Սասուն Գրիգորյանի մոտ կատարվել է <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում, այլ ոչ թե <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի հավելված 2-ով սահմանված ուսումնասիրություն: Այսինքն, <Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին> ՀՀ օրենքի հավելված 2-ի 1.4 կետով սահմանված հանձնարարագրի ներկայացման անհրաժեշտությունը բացակայում է: Բացի այդ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 14.05.2012թ. թիվ 1101923 հանձնարարագիրը ներկայացվել է Ա/Ձ Սասուն Գրիգորյանին, սակայն վերջինս հրաժարվել է դրան ծանոթանալուց և օրինակը ստանալուց:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 10-ի <Գանգատարկման խորհուրդ ստեղծելու և վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովների որոշումների քննարկման կարգը հաստատելու մասին> N 1361-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի, Հանձնաժողովի որոշման նախագիծը ուղարկվել է վերադաս հարկային ու մաքսային մարմինների գանգատարկման խորհուրդ:

Որոշման նախագծի վերաբերյալ Գանգատարկման խորհուրդը տվել է դրական եզրակացություն:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով <Հարկային ծառայության մասին> ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Ստուգման ակտը թողնելու անփոփոխ:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատերը պարտավորվում են իրավունք ունի բողոքարկել դատարան:



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ